

ՀԱՎԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25ա

Հեռ. (+374 47) 94 28 58, ֆաքս (+374 47) 97 42 14

Էլ. փոստ` info@artsakhhek.am

Ինտերնետային կայք` www.artsakhhek.am

Հաշվետվություն թիվ 5, 16.07.20թ.:

Սույնով տեղեկացնում ենք, որ 2020 թվականի հուլիսի 13-ին կայացել է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստ:

Ստորև ներկայացվում են տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները (նիստի արձանագրությունը կազմվել է 14.07.20թ-ին):

Վ. Բեգլարյան

(ստորագրություն)



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Գլխավոր տնօրեն

16.07.2020թ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի, 2020թ

N 4-2020/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 և 12.11 կետերը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 13.07.2020թ. նիստի N4-2020 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. Դիմել «Արցախբանկ» ՓԲԸ 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ գումարի չափով, 84 ամիս մարման ժամկետով, «Հաթերք-Սոլար» արևային կայանի և «Քարվաճառ» ՀԷԿ-ի սարքավորումների ձեռքբերման պայմանագրերով սահմանված հերթական փուլերի վճարման և շինարարական աշխատանքների ֆինանսավորման նպատակով վարկ ստանալու համար:
2. Ստացվելիք վարկի ապահովության միջոց կհանդիսանա ԱՀ Պետական բյուջեի երաշխիքը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 13-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա. Բալայան